

ՊԱՏՈՒԻ ՀԱՄԱՐ

ԴՐԱՄԱ ՉՈՐՄ ԱՐԱՐՈՒՄԾՈՎ

ԱՐԱՐՈՒՄԾ ԵՐԿՐՈՐԴ

Էլիզաբարեանների մեծ հիւրասենեակը, կահաւորուած շատ հարուստ, բայց առանց որոշ ճաշակի Աջ պատի մէջ երկու դռներ, որոնցից խորքինը տանում է դէպի Նախասենեակ, ավանսցենայի կողմինը—դէպի Անդրէասի սենեակը: Երկու դռների միջեւ գահաւորակ, շուրջը բազկաթոռներ, առջեւը կլոր սեղան մետաքսեայ սփողոցով ծածկուած, վրէն ճիւղաւոր էլէքտրական լամպար:

Խորքում եւս երկու դռներ, որոնցից աջ կողմինը տանում է սեղանատուն, ծախ կողմինը—օրիորդների սենեակները: Զախ պատի մէջ միայն մի դուռն, որ տանում է Բագրատի եւ Սուրէնի սենեակները: Այս պատի առջեւ, դէպի բնակ խորքը գահաւորակ, առջեւը նոյնպէս կլոր սեղան, շուրջը կիսաբազկաթոռներ: Սեղանի վրայ այլքօմ եւ գեղեցիկ իրեր: Դահաւորակի ետեւում, պատի վրայ հայելի ապակեայ շքր-ջանակով: Ծոյն պատի առջեւ, դէպի ավանսցենա—դաշնամուր: Ոսկէզօծ աթոռներ, թանգազին թաւեայ նստարաններ, բազմոցներ, վազաներ, կիսարձաններ, տրոպիական բոյսեր եւայլն:

Յատակը ծայրէիծար ծածկուած է գորգերով: Դռները վարագուրուած են ուրախ գունի վարագոյրներով: Առաստաղից բաշ է արած մի մեծ էլէքտրական ջահ շատ ճիւղերով:

Կէսօր է: Սեղանատան դռները բաց են: Այնտեղ երեւում է Զարուհին, որ սփողոց է գցում ճաշի սեղանի վրայ եւ ապա սկսում է Նախաճաշ պատրաստել:

Վարագոյրը բարձրանալուց մի քանի վայրկեան ան-
ցած սեղանատնից լսում է պատի ժամացոյցի տամներկու
գարկը: Նախասենեակի դռներից մտնում է Վարդանը կարմիր
չերքէզիով, գլխին մեծ սպիտակ մորթէ գլակ: Նա բռնա-
տրուած է զանազան թղթէ կապոցներով եւ ձեռքին զգու-
շովեամբ բռնած է մի անագին թղթարկղ, մէջը կանացի
գլխարկ:

ՏԵՍԻԼ I.

ՎԱՐԴԱՆ ԵՒ ԶԱՐՈՒՀԻ

ՎԱՐԴԱՆ. Ո՛ւֆ, Աստուած վկայ, հոգիս բողազս եկաւ:
Իլիդս կտրուեց: (Սկսում է մէկ մէկ կապոցները ձգել
յատակի վրայ, թղթարկղը ձեռքից բաց չի թողնում:
Նրեսի քրտինքը սրբում է չերքէզիու փէշով եւ այդ
միջոցին գղակը գցում է յատակի վրայ):

ԶԱՐՈՒՀԻ. (Ներս է մտնում՝ սեղանատնից, սուրճի
գաւաթն անձնոցիկով սրբելով): Հը՛մ, եկա՞ր: Բա բա
բա, այդ Խնչ շատ բաներ ես բերել:

ՎԱՐԴԱՆ. Ա՛յի, մո անտէր չեարքեագին ուսերիս ա
բաշիլ տուալ, մո լեազգիի փափաղն ալ գլխիս տիրալ,
նստացուբալ ա կօզլի վերայ զազախի պէս, բչի հա քչի:
Մ՛լ մաղազին չը մնաց—չը մտնանք, ալ պեան չը մնաց
—չառնի: Իստէ միտիկ արա ա, կասես քի եարմուկա
եանք սաբքիլու:

ԶԱՐՈՒՀԻ. (Հետաքրքրուած, գաւաթն ու անձնո-
ցիկը դրել է ոսկէզօծ աթոռներից մէկի վրայ եւ կա-
պոցները տնտղում է): Դէրիացու, էլի դէրիացու, կռու-
ժօֆներ, էլի կռուժօֆներ, զօնթիկ, վէյեր, շալ, պեր-
չաթկաներ, մի դիւժին: Հապա տեսնեմ ինչպիսի գըլ-
խարկ է:

ՎԱՐԴԱՆ. (Թղթարկղը հեռու պահելով): Հէ հէ,
հեռի կաննիր, ասալ ա իսկի մարդի ցոյց չըտաս: Բե-
րանիդ ջիւրը քի բինեայ: Հեարեաս ինքն ալ կեամ ա:

ՏԵՍԻՆ 11

ՆՈՅՆԻ ԵՒ ՌՕԶԱԼԻՍ

ՌՕԶԱԼԻՍ. (Ծերս է մտնում նախասեննակից գլխարկով եւ վերարկուով): Օ, mon Dieu, յոգնեցի: Ման եկայ, ման եկայ, հագիւ կարողացայ իմ ճաշակով մի բանի բաներ գտնել: Այն օրից, որ Պարիզը տեսել եմ, էլ այստեղ ոչ մի բան չեմ հաւանում: (Վարդանին) Յիմար, ինչու ես յատակի վրայ գցել: (Զարուհուն) Վերցրու, տար իմ սենեակը: Գլխարկը թող այստեղ: (Անում է Վարդանից թղթարկողը եւ դնում սեղանի վրայ):

ԶԱՐՈՒՀԻ. (Վարդանի օգնութեամբ կապոցները տանում է խորէի ծախ դռներով եւ իսկոյն վերադառնում են):

ՌՕԶԱԼԻՍ. (Մօտենում է հայելուն եւ հրժուանքով նայում իրան: Եետոյ վերցնում է իւր գլխի գլխարկը եւ դնում սեղանի վրայ):

ԶԱՐՈՒՀԻ. } (Սպասում են հրամաններին)
ՎԱՐԴԱՆ. }

ՌՕԶԱԼԻՍ. (Բաց է անում թղթարկողը, դուրս է բերում ահագին կարմիր փետուրով մի սուիտակ գլխարկ եւ հիացած նայում): Հապա, մէկէլ տեսնեմ լաւ է սազում: (Դնում է գլխին եւ նայում հայելուն): Հըմ, օրիորդ իլդարեանն ուզում էր ինձ հաւատացնել, որ մօդէլը միայն իւր համար է բերուած: Կարծեմ, վատ չէ, ան, Զարուհի:

ԶԱՐՈՒՀԻ. Ույ, օրիորդ, ինչպէս է սազում, ինչպէս: **ՎԱՐԴԱՆ.** Կասես, նուռնի ծաղիկ իլի, ես լալազար:

ԶԱՐՈՒՀԻ. Ով գիտէ, քսան մանէթ էք տուել...

ՌՕԶԱԼԻՍ. (Արհամարհանքով) Յի դժն, հիմայ ամեն մի մակլերի աղջիկ էլ քսան մանէթանոց գլխարկ է հագնում: Պարիզից է բերել տուած, արժէ իննըսուն ռուբլի:

ՎԱՐԴԱՆ. Իննըսուն մանէթ... Վայ սատանայ փրո-
նողանց Վարդան, իննըսուն մանէթով Շամախիում մին
տուն կարելի ա շինիլ... հալա կտուրն ալ զուսծ...

ՌՕՁԱԼԻԱ. (Ընանց նրան նայելով): Դու դեռ այս-
տեղ ես:

ՎԱՐԴԱՆ. Հրամանիդ ամ սպասըմ: Ա՛լ պեան չես
ասիլու:

ՌՕՁԱԼԻԱ. (Ծրեսը դարձնելով նրա կողմը): «Զես»
ասիլու, «Զես»-ը որն է, ես քոյրդ եմ, թէ ընկերդ:

ՎԱՐԴԱՆ. Ա. բալամ, դէ մենք չօբան մարդ անք,
հինչ իմանանք:

ՌՕՁԱԼԻԱ. Հիմա էլ «մենք»: Այդ ինչ տեսակի մար-
դիկ են, արքայական եղանակով են խօսում. ուրիշնե-
րին «գու», իսկ իրանց մասին—«մենք»: Գնա՛. Իվանին
ասա, որ կառքն ինձ հարկաւոր չէ: (Վարդանը շփո-
թուած հեռանում է նախասենեակ, գղակը մոռանալով
յատակի վրայ: Զարուհուն): Ո՞վ կայ տանը: (Ծոյր գըլ-
խարկը դնում է թղթարկղի մէջ):

ՁԱՐՈՒՀԻ. Տիրուհին և օրիորդը:

ՌՕՁԱԼԻԱ. Կանչիր այստեղ Ռիտային: Տար այս
գլխարկը սենեակս:

ՁԱՐՈՒՀԻ. (Վերցնում է թղթարկղն և գնում օ-
րիորդների սենեակները):

ՌՕՁԱԼԻԱ. (Հանում է վերարկուն, ծգում քազկա-
թոռները և մէկի վրայ, նորից մօտենում է հայելուն և
մազերն ուղղում):

ՎԱՐԴԱՆ. (Յետ է գալիս նախասենեակից և յա-
տակի վրայ որոնում է գղակը): Այի, հինչ տեղ կորա-
անտէրը:

ՌՕՁԱԼԻԱ. Այդ ինչ ես փնտրում:

ՁԱՐՈՒՀԻ. (Վերադառնում է, վերցնում է Ռօզա-
լիայի հին գլխարկն ու վերարկուն և տանում նախա-
սենեակ):

ՎԱՐԴԱՆ. Եռւլահիս: Զամ իմանըմ հինչ տեղ թո-

դի (Գտնում է): Հա, հեարեաս (վերցնում է): Այ, քո տիրոջ վիզը կոտրուի հաս: (Ձեռով զարկում է գռակին):
Ռ-ՕԶԱԼԻԱ. (Կատաղած) Ի՞նչ ես անում, վայրենի: Դուրս եկ, անկիրթ հայ:

ՎԱՐԴԱՆ. (Մեկուսի) Ա՛յի, դրանց ղուլլուղ անիլը թամամ խաթաբալա ես քի... (Գնում է նախասեննակ):

ՋԱՐՈՒՀԻ. (վերադառնում է նախասեննակից):

Ռ-ՕԶԱԼԻԱ. Արի ու այդ տեսակ արջերից մարդ պատրաստիր: Իսկ ես դեռ ուզում եմ Կաբրիօլետիս համար նրան ցիլինդր ու ֆռակ հագնել: Լաւ գոում կլլինի, ինչ ասիլ կուղի Ջէ, պէտք է այլազգի վարձել:

ՋԱՐՈՒՀԻ. (վերցնում է սրճի գաւաթն ու անձեռոցիկը եւ անցնում է սեղանատուն):

ՏԵՍԻԼ III

Ռ-ՕԶԱԼԻԱ ԵՒ ՄԱՐԳԱՐԻՏ

ՄԱՐԳԱՐԻՏ. (Ներս է մտնում հագնուած համեստ, բայց աւելի լաւ, քան աուջին՝ արարուածում: Ձեռին պահած է մի անկազմ գիրք: Չի կարդում):

Ռ-ՕԶԱԼԻԱ. (Ժաղրելով) Իսկ և իսկ Մարգարիտա-Փառուստ օպերայից. գրքոյկը ձեռքումդ, համեստ, ամօթխած, պակասում է ճախարակը: Երանի գիտենայի, ինչ ես գտնում ընթերցանութեան մէջ: (Ձգում է գահաւորակի վրայ):

ՄԱՐԳԱՐԻՏ. Ո՛րտեղ էիր: (Գիտքը դնում է ձախ կողմի սեղանի վրայ եւ նստում):

Ռ-ՕԶԱԼԻԱ. Օհ, էլ մի հարցնիր, յոգնեցի: Գլխարկս, վերջապէս, ստացայ: Յետոյ կըտեսնես, ինչ հիանալի բան է: Այսօր ծախսեցի մօտ 300 ուռբլի: Հայրիկը բարկանալու է, բայց ինչ արած, բոլորը հարկաւոր բաներ են:

ՄԱՐԳԱՐԻՏ. Ռօզալիա, մինչև երբ պիտի այդպէս անհաշիւ շուայես:

ՌՕՁԱԼԻԱ. Օհօ, դու ինձ յանդիմանում ես:
ՄԱՐԳԱՐԻՏ. Եթէ կամենաս—այո, բո շուայլութիւնն
արժանի է յանդիմանութեան:

ՌՕՁԱԼԻԱ. (Հեզնաքար) Մի՛թէ, այ այ այ: Եթէ
նախանձում ես ինձ, ինքդ էլ կարող ես շուայլել: Ի՞նչն
է քեզ խանդարում:

ՄԱՐԳԱՐԻՏ. Երևի, կայ մի բան, որ խանդարում է:

ՌՕՁԱԼԻԱ. Օհօ, այսօր դու բաւական հետաքրքրա-
կան ես: Ապա, բարեհաճիր ասել, տեսնենք, էլի ի՞նչ է
պատահել: Դէմքդ շատ խորհրդաւոր է:

ՄԱՐԳԱՐԻՏ. Ռողալիս, հասկացիր, վերջապէս, ինչ
է կատարուում այս տանը: Չի կարելի հանգիստ հոգով
շուայլել այն փողերը, որոնց վրայ ծանրանում է մի մեծ
մեղադրանք: (Վեր է կենում):

ՌՕՁԱԼԻԱ. Բայց ո՞վ է այդ մեղադրանքը դնողը:
Ո՞վ: Քո Արտաշէս Օթարեանը: Մի կեղտոտ և անամօթ
զրպարտիչ: (Վեր է կենում):

ՄԱՐԳԱՐԻՏ. (Մտնել յանդիմանութեամբ, քայք վըր-
դովուած) Ռողալիս. .

ՌՕՁԱԼԻԱ. Բաւական է, մի համարձակուիլը պաշտ-
պանել նրան իմ մօտ: Քեզանից առաջ ես եմ ճանաչել
նրան: Ես ատում եմ այդ մարդուն: Ատում եմ հոգոյս
բոլոր ուժով: Նա ապերախտ է, ինչպէս օձ, որին մեր
հայրը տաքացրել է իւր ծոցում: Եւ ես զարմանում եմ,
որ հայրիկը մինչև օրս նրան ցոյց չի տուել մեր տան
դռները:

ՄԱՐԳԱՐԻՏ. (Հառաչելով) Ո՞վ գիտէ, գուցէ այդ
այնքան էլ հեշտ չէ:

ՌՕՁԱԼԻԱ. (Կանգ առնելով ևւ խիստ) Բիտա, դու
չափից անցնում ես: Դու պէտք է շատ անպիտան աղջիկ
լինիս, որ հաւատաս հարազատ ծնողիդ զրպարտողին:

ՄԱՐԳԱՐԻՏ. (Շոյն եղանակով) Ախ, գուցէ շատ եմ
փափաղում չը հաւատալ, բայց...

ՌՕՁԱԼԻԱ. (Ընդհատելով) Բայց վախենում ես զըր-

կուել նրա բարեհաճ ուշադրութիւնից, այնպէս չէ...

ՄԱՐԳԱՐԻՏ. Ի՞նչ ես ուզում ասել: Որ ես սիրում եմ Օթարեանին: Այո, սիրում եմ և շատ եմ սիրում, թող այս յայտնի լինի քեզ և ամենքին: (Անց ու դարձ է անում):

ՌՕՋԱԼԻՍ. (Ժաղրաբար, ատելութեամբ ու նախանձով) Ինչ քաջն ես, իսկ և իսկ հերոսուհի: Ասե՛ք, ես վաղուց գիտէի այդ: Բայց չէի երևակայում, թէ սէրդ այնքան թունդ է, որ պատրաստ ես հօրդ պատիւն անգամ զոհել նրան:

ՄԱՐԳԱՐԻՏ. Միայն այն դէպքում, եթէ այդ պատիւը մաքուր չէ:

ՌՕՋԱԼԻՍ. Ի՞նչ ես ուզում ասել:

ՄԱՐԳԱՐԻՏ. Այն, որ ես մի րոպէ անգամ չէի տատանուիլ երես դարձնել Օթարեանից, եթէ համոզուէի, որ նրա դատն արդար չէ: Այն, որ ես կըսկսէի Աստուծու պէս պաշտել հայրիկին, եթէ համոզուէի, որ նա անպարտ է իւր ընկերոջ գերեզմանի առաջ: (Ընկճունելով, դառն ու մոայլ ծայնով): Հայրիկը մինչև օրս դեռ չի կարողացել հերքել Արտաշէսի պահանջը փաստերով: Մեր գերդաստանի գլխին կանգնած է մի սոսկալի յանցանք: Նա ճնշում է իմ հոգին արճիճի պէս: Ես չըգիտեմ գլուխս ամօթից ուր թագցնեմ: (Ծստում է թազկաթոռներից մէկի վրայ և գլուխը դնում սեղանի վրայ):

ՌՕՋԱԼԻՍ. (Տակաւին ծաղրաբար) Ի հարկէ, բացի քեզանից ո՞վ ունի պատուի մասին հասկացողութիւն կամ գերդաստանական հպարտութիւն: Մենք ամենքս թեթևամիտներ ենք: (Հուրջ) Երկուսից մէկը. կամ դու խելագարուել ես կամ այդ մարդը մի հասարակ ինտրիգան չէ, այլ խարդախ դէ: Ուրիշ կերպ չեմ կարող բացառել ըստ այժմեան տրամադրութիւնը: (Թեթև լռութիւնից յետոյ, մօտենում է): Լսի՛ր, Բիտա, ես իմ հօր հարազատ զաւակն եմ, պարտաւոր եմ սիրել ու պաշտպանել նրան թէկուզ նա վերջին տեսակի աւա-

զակ լինի: Եւ ահա իմ ասելիքը. թող քո Օթարեանը ինչ ուզում է հնարի իմ հօր մասին, իսկ ես կաշխատեմ խայտառակութեամբ դուրս վռնդել նրան մեր տնից: Հասկացար: Դու կարող ես կատաղել իմ դէմ, թշնամանալ ինձ, բայց այդ ոչինչ նշանակութիւն չի ունենալ ինձ համար: (Հեռանում է):

ՄԱՐԳԱՐԻՏ. Ախ, թող ով ինչ ուզում է անի, ինձ համար միեւնոյնն է: Ես կը լսեմ միայն իմ խղճի ձայնին: Ես կարծում եմ, որ չի կարող լինել ոչ որդիական և ոչ մի ուրիշ սէր ստի և խաբէութեան մէջ:

ՋԱՐՈՒՀԻ. (Սեղանատան դռներից) Նախաճաշը պատրաստ է:

ՌՕՋԱԼԻԱ. Գնանք: Հայրիկն իսկոյն կը գայ: Դու պարտաւոր ես քո յիմարութիւնները թագցնել նրանից:

ՄԱՐԳԱՐԻՏ. Ես ախորժակ չունիմ:

ՌՕՋԱԼԻԱ. (Ատելութեամբ լի մի հայեացք ձգելով Մարգարտի վրայ, անցնում է սեղանատուն):

ՄԱՐԳԱՐԻՏ. (Մնում է քսմի ծախ կողմում մտածմունքների սէջ):

ՏԵՍԻՆ IV

ՄԱՐԳԱՐԻՏ, ԱՆԴՐԷԱՍ, ԲԱԳՐԱՏ ԵՒ ՍԱՂԱԹԷԼ

Վերջին սրնքը ներս են մտնում նախասննեակից

ԱՆԴՐԷԱՍ. Մի հակառակիր ինձ: Ինչպէս ասում եմ, այնպէս էլ պէտք է լինի: Կրակը իւզով չեն հանգցնիլ:

ԲԱԳՐԱՏ. Եթէ միայն կրակ է: Դատը մենք կը տանենք, քանի որ նա փաստեր չունի: Թող պահանջի օրէնքով: Երբ քաղաքացիական դատը կը վերջացնենք, մեր կողմից կը սկսենք նրա դէմ քրէական դատ: Այս անհրաժեշտ է քո, իմ և մեր ամբողջ գերդաստանի պատուի համար:

ԱՆԴՐԷԱՍ. Որ վզովս թուկ գցես, նրա հետ դատի չեմ գուրս դալ:

ԲԱԳՐԱՏ. Հայր, մանուկ հասակիցս քեզանից անդադար լսել եմ, որ քո հարստութիւնը վաստակել ես արդար քրտինքով:

ԱՆԴՐԷԱՍ. (Գրգռունելով) Ասել եմ, ասել եմ, էլի եմ ասում, բայց դու քիչ կրկնիր: Այդ տղան ինձ զրպարտում է, բայց ես էլի ուզում եմ նրա հետ հաշտուել:

ԲԱԳՐԱՏ. Ձեռն հասկանում, բոլորովին չեմ հասկանում:

ԱՆԴՐԷԱՍ. Սաղաթէլ, գնա, գրասենեակից մի մարդ ուղարկիր, որ շուտով նրան կանչեն այստեղ:

ՍԱՂԱԹԷՆ. (Գնում է նախասենեակի դռներով):

ԱՆԴՐԷԱՍ. (Նոր միայն նկատում է Մարգարտին, որ ամբողջ ժամանակ կանգնած ծախ պատի տակ, ուշադիր դիտում է հորը): Աա, դու ակննջ էիր դնում: Տէր Աստուած, Տէր Աստուած, մի բոպէ հանգստութիւն չուների: Կարծես, ամենքն երդուել են ինձ խեղբից հանել:

ՄԱՐԳԱՐՏ. Ներիր, հայրիկ, ես հեռանում եմ:

ԱՆԴՐԷԱՍ. Լաւ, դու էլ մի նեղանար: Ես մեղաւոր չեմ, եղբայրդ է ինձ կատաղեցնում: Բայց ոչ, դու էլ պակաս չես, դու էլ մօրդ պէս ինձ չես սիրում, դու ատում ես ինձ:

ՄԱՐԳԱՐՏ. (Անշափ վշտացած) Հայրիկ...

ԵՐԱՆՈՒՀԻ.

ՌՕԶԱԼԻԱ.

} Երեսում են սեղանատան դռների մէջ:

ՏԵՍԻՆ V

ԼՈՅՆՔ, ԱՌԱՆՑ ՍԱՂԱԹԷՆԻ, ԵՐԱՆՈՒՀԻ ԵՒ ՌՕԶԱԼԻԱ:

ԱՆԴՐԷԱՍ. Կորիր, ես քո հայրը չեմ, դու խորթ ես ինձ համար: Ես այս տանն օտար եմ, օտար, իմ մասին մտածող չըկայ: Ես ձեր աչքում մի համբալ եմ, ուրիշ ոչինչ...

ՌՕՁԱԼԻԱ. Գոնէ իմ մասին, հայրիկ, իրաւունք չունիս այդ ասելու: (Առաջ է գալիս):

ԱՆԴՐԷԱՍ. Աա, եկան, հաւաքուեցին: Գնա, քեզ էլ եմ ճանաչում: Դու այն ժամանակ ես մտածում իմ մասին, երբ հարկաւոր է պարտքերդ վճարել մաղաղիններին: Դուք ինձ կերաք, քանդեցիք: Հետո՞հետէ անլի ու անլի զրգոռելով: Ես ոչ ոքի համար մարդ չեմ, ոչ ուրիշների, ոչ իմ տնացիներին: Ամենքն ինձ համարում եմ ոսկու տոպրակ, ուրիշ ոչինչ: Յարգում են երեսանց, իսկ ետեւիցս չարախօսում են: Երբ կարիք ունին, վազում են գլխիս, երբ չունին—ես չըկամ նրանց համար:

ԲԱԳԲԱՏ. Պէտք է խոստովանել, որ այդ մասամբ ճիշտ է:

ԱՆԴՐԷԱՍ. Ճիշտ է, բաս չէ: Հէ, ես յիմար չեմ, ճանաչում եմ մարդկանց հոգին: Ամենքն իրանց գլխի մասին են մտածում: Հէնց մէկը դու ինքդ: Սուտ է, դու էլ ինձ չես սիրում, դու էլ ինձ փողի համար ես պատում: Այո, այո, ես մարդ չեմ քեզ համար, այլ փողի սնդուկ: Բայց երկար խաբել չես կարող: Էլ ոչ մի կողմէկ չեմ տալու:

ԲԱԳԲԱՏ. Հայրիկ, հանգստացիր:

ԱՆԴՐԷԱՍ. Այո, չեմ տալու, թող գործարանդ կիսատ մնայ: Ի՞նձ ինչ: Ես իմ հօրից փող ստացել եմ, որ դու ինձ պրկում ես, ամա թուք ու մուքով, զրկանքներով, քաղցած փորով եմ ես մարդ դարձել: Գնա, ինքդ էլ արիւնք քրտինք թափիր, այն ժամանակ կասեմ խելօք ես: Ամենքդ դնացէք, ձեր աշխատանքով ապրեցէք: Այստեղ մտիկ արէք, տեսէք ինչ տուն ու տեղ են սարքել: Ինչիս է հարկաւոր այս ոսկէգօծ կահ-կարասին: Ո՞վ եմ ես, որ խանի կամ իշխանի տղան: Հէ, մի նախկին գեաղայ, պանիր ու հացով ապրած լակոտ: Ինչո՞ւ էք ինձ քանդում: Դուք էք մեղաւոր, որ Օթարեանը կպել է եախիցս: Այո այո, դուք: Նա տեսնում է, որ

դուք տակն ու վրայ էք անում իմ հարստութիւնը, ուղում է ինքն էլ ձեզ պէս շռայլել: Դուք ինձ համար թշնամիներ էք ստեղծում...

ՄԱՐԳԱՐԻՏ. (Հանդարտ լալիս է.)

ԱՆԴՐԷԱՍ. Լաց, էլի արտասուք: Հոգիս բերանս բերիք, խեղդեցիք, սպանեցիք: Հերիք է, հեռացիր. ես ատելով ատում եմ արտասուքը: Անդրէաս էլիղբարովի յօտ ոչ լաց եղէք, ոչ ծիծաղեցէք:

ՄԱՐԳԱՐԻՏ. (Բարձր ձայնով հեկեկալով, անցնում իւր սենեակը.)

ԵՐԱՆՈՒՀԻ. Ինչպէս սիրտ արիւր նրան վիրաւորելու: Նա Աստծու գառն է:

ԱՆԴՐԷԱՍ. Աստծու գառը, հօրդ պէս: Ես ատելով ատում եմ Աստծու գառներին: Տուէք ինձ Սաթայէլին, ես նրա հետ աւելի հեշտութեամբ կը հաշտուիմ, քան Աստծու գառների հետ: Գնացէք, ինչ էք ագռաւների պէս գլխիս հաւաքուել, ինձ խօս չեն թաղում, ինձ ուղում են միայն կողոպտել, տկլորել, փողոցները զցել: Կոնէ դուք խնայեցէք ինձ: Դէհ, կորէք, հայդա: (Նըստում է աջ կողմի քազկաթոռները մէկի վրայ.)

ԵՐԱՆՈՒՀԻ. } Անցնում են սեղանատուն,
ԲԱԳՐԱՏ. }

ՌՕԶԱԼԻԱ. (Մնում է ընմի վրայ.)

ՏԵՍԻԼ VI

ԱՆԴՐԷԱՍ ԵՒ ՌՕԶԱԼԻԱ

ԱՆԴՐԷԱՍ. (Նստած է խորին մտածողութեան մէջ եւ տանջւում է.)

ՌՕԶԱԼԻԱ. (Ուզում է մօտենալ ու խօսել, քայց չի վստահանում.)

ԱՆԴՐԷԱՍ. (Հառաչում է, ձեռը զարկելով սեղանին.) Ա՛հ...

ՌՕԶԱԼԻԱ. Հայրիկ, ինչն է քեզ այդպէս տանջում:

ԱՆԴՐԷԱՍ. (Գլուխը զարձրացնելով, անտարբեր) Գո բանը չէ:

ՌՕՁԱԼԻԱ. Ներեր, հայրիկ, քո հոգսերը վերաբերուում են եւ քո զաւակներին:

ԱՆԴՐԷԱՍ. (Դարձեալ անտարբեր): Ես հոգս չունիմ (Ներվային՝ արագութեամբ ոտքի կանգնելով): Բան ունիմ ասելու:

ՌՕՁԱԼԻԱ. Այո, հայրիկ, ունիմ, բայց չեմ համարձակուում:

ԱՆԴՐԷԱՍ. Դէհ, կարճ կապիր, ես գնում եմ:

ՌՕՁԱԼԻԱ. Գիտես ինչ, հայրիկ, այն մարդը, որ մուտքեւ է քո բարերարութիւնը և ուզում է քեզ կողոպտել, այստեղ, մեր տանը զինակից ունի:

ԱՆԴՐԷԱՍ. (Հետաքրքրուած) Ա՜, ինչ, պարզ ասա:

ՌՕՁԱԼԻԱ. Մարգարիտը սիրահարուած է Օթարեանի վրայ:

ԱՆԴՐԷԱՍ. Ի՞նչ, սիրահարուած: Ով ասաց քեզ:

ՌՕՁԱԼԻԱ. Հէնց ինքը Մարգարիտը, սրանից մի կէս ժամ առաջ:

ԱՆԴՐԷԱՍ. Յետոյ: Նա էլ սիրում է Մարգարիտին:

ՌՕՁԱԼԻԱ. Պէտք է կարծել, թէև այն տեսակ մարդու հաւատալ չի կարելի:

ԱՆԴՐԷԱՍ. (Մի քանի վայրկեան մտածում է, յանկարծ դէմքը պայծառանում է ուրախութիւնից): Ասում ես, ինքը, Մարգարիտը խոստովանեց:

ՌՕՁԱԼԻԱ. Այո, հայրիկ: Ես գիտեմ, որ նրանք ամեն օր տեսակցութիւն ունին դրսերում: Հայրիկ, ես պարտք համարեցի քեզ զգուշացնել այս մասին: Կարծում եմ, մեր գերդաստանի պատիւը պահանջում է այդ սէրը խափանել հէնց այժմեանից: Ճշմարիտ է, Մարգարիտը մի առանձին արժանաւորութիւն չունի, բայց ինչ էլ լինի, քո աղջիկն է: Օթարեանը արժանի չէ քո փեսան դառնալու:

ԱՆԴՐԷԱՍ. (Շարունակ մտածելով) Ի հարկէ, ի

հարկէ: Ծնորհակալ եմ, որ ինձ ղդուշացրիր: Գնա, իսկոյն Մարգարտին կանչիր այստեղ:

ՌՕՁԱԼԻԱ. Բայց, հայրիկ, շատ էլ չըբարկանաս նրա վրայ: Յիմար է, չի հասկանում:

ԱՆԴՐԷԱՍ. (Անհամբեր) Գնա, նրան կանչիր այստեղ:

ՌՕՁԱԼԻԱ. (Մեկուսի) Տեսնենք, ինչպէս պիտի պաշտպանես սիրեկանիդ, (Գնում է խորքի ծախ դռներով):

ՏԻՍԻԼ VII

ԱՆԴՐԷԱՍ ԵՒ ՄԱՐԳԱՐԻՏ:

ԱՆԴՐԷԱՍ. (Մինչեւ Մարգարտի գալը, մտազբաղ անցուդարձ է անում, զանազան շարժումներով իւր միտքն արտայայտելով):

ՄԱՐԳԱՐԻՏ. (Դուրս է գալիս խորքի ծախ դռներից հանդարտ քայլերով):

ՌՕՁԱԼԻԱ. (Դուրս է գալիս անմիջապէս քրոջ տեւից, բանի մի վայրկեան կանգ առնում, նայում է եւ անցնում սեղանատուն, դռները ծածկելով):

ԱՆԴՐԷԱՍ. Առաջ եկ, լալկան աղջիկ. Հայրը որդու վրայ չի կարող բարկանալ, ինչ է: Հէ, բաս ինչ կանէիք դուք, երես առածներ, եթէ մեր ծնողների պէս ծնողներ ունենայիք: Հայրս վզակոթիս որ տալիս էր—աչքերիցս պէժեր էին թռչում: Դէ լաւ, բաց արա աչքունքդ, ծնողի դէմ ոխ չեն պահիլ:


ՄԱՐԳԱՐԻՏ. Հայրիկ, ես քո դէմ ոխ չունիմ:

ԱՆԴՐԷԱՍ. Այ, օրհնեալ լինիս, աղջիկս: Ես գիտեմ, որ դու բարի սիրտ ունիս, դէհ, արի հաշտուենք: (Մօտենում է եւ ծակատը համբուրում): Բայց ես էլի քեզ վրայ բարկացած եմ: Գիտես ինչ, աղջիկս, դու հօրդ հետ անկեղծ չես:

ՄԱՐԳԱՐԻՏ. (Ձարմացած նայում է հօրը) Անկեղծ...

ԱՆԴՐԷԱՍ. Ինչու ես զարմանում:

ՄԱՐԳԱՐԻՏ. Հայր, առաջին անգամն եմ ես քեզ-



2021-111 001

նից այդպիսի բան լսում, Դու երբէք ինձ արժանի չես համարել այդ տեսակ խօսակցութեան:

ԱՆԴՐԷՍ. Որովհետեւ դու ինքդ քեզ հեռու ես պահում ինձանից: Դու, երևի, մտածում ես, էհ, իմ հայրը մի տղէտ և խորամանկ վաճառական է, չարժէ, որ սիրտս բաց անեմ նրա առաջ:

ՄԱՐԳԱՐԻՏ. Ոչ, հայրիկ, սխալում ես, հաւատացնում եմ քեզ: Ես միշտ պատրաստ եմ եղել քեզ յայտնել իմ բոլոր մտածմունքները. ամենայն անկեղծութեամբ, միայն թէ արժանի համարէիր ինձ լսելու: Բայց դու... դու միշտ սանձահարել ես իմ լեզուն քո մնայլ բնաւորութեամբ:

ԱՆԴՐԷՍ. (Ուրախ ձեւանայով): Այո՛: Ասլրիս դաւակոս: Դէ որ այդպէս է՝ ասա ինձ, ինչո՞ւ այս քանի օրերս տխուր ես:

ՄԱՐԳԱՐԻՏ. (Շփոթուելով) Չըզիտեմ... ես... տխուր չեմ:

ԱՆԴՐԷՍ. Այ, տեսնո՞ւ Դու կեղծել չես սիրում, բայց հիմայ կեղծեցիր: Ուզո՞ւմ ես, որ քո տեղ ես պատասխանեմ: Դու տխուր ես, որովհետեւ վերջերս քեզ հաւատացրել են, թէ քո հայրն ազնիւ մարդ չէ:

ՄԱՐԳԱՐԻՏ. Հայրիկ...

ԱՆԴՐԷՍ. Այո, սիրելիս, դու ինձանից թաղցնել չես կարող: Ես մարդու մի շարժումից կարող եմ իմանալ, թէ նա ինչ է մտածում իմ մասին: Հապա, պատմիր, տեսնեմ, ինչեր է ասել քեզ իմ մասին քո սիրած երիտասարդը..

ՄԱՐԳԱՐԻՏ. (Բոլորովին շփոթուում է ու կարմրում):

ԱՆԴՐԷՍ. Լա՛ւ, մի ամաչիր: Բոլորը յայտնի է ինձ: Մի վախենար, չեմ բարկանում. Ես Արտաշէսին վատ տղայ չեմ համարում: Եթէ վատ համարէի, վաղուց նրա օտը կտրած կլլինէի իմ տնից: Միայն, աղջիկս, նա դեռ երեխայ է, չի հասկանում իւր արածը: Նա իմ բարերարութիւնները մոռանում է: Է՛հ, Տէրը նրա հետ,

երևի, մի օր խելքի կըգայ, կըտեսնի որ սխալուած է ու կըփոշմանի:

ՄԱՐԳԱՐԻՏ. (Ուրախանալով եւ միննոյն ժամանակ ղեռ կասկածելով): Այո, սխալուած է քո մասին: ԱՆԴՐԷԱՍ. Ի հարկէ, բաս ի՞նչ էիր կարծում:

ՄԱՐԳԱՐԻՏ. Հայրիկ, ինչո՞ւ թագցնեմ, ես երբէք չեմ կասկածել ոչ քո անցեալի եւ ոչ ներկայի ազնուութեան մասին: Բայց նա ինձ համոզում է, որ...

ԱՆԴՐԷԱՍ. Որ ես կողոպտել եմ նրա հօրը, այնպէս չէ՞ Բայց ինչո՞վ է համոզում, խօսքերով, թէ՞ փաստերով:

ՄԱՐԳԱՐԻՏ. Հայրիկ, ես ոչ ըեզանից կարող եմ փաստ պահանջել, ոչ նրանից:

ԱՆԴՐԷԱՍ. Բայց առանց փաստերի կարող ես ծնողիդ դատապարտել, հաս: (Կեղծ վշտանալով) Աձօթ քեզ, Մարգարիտ, ամօթ: Դու ինձ ապտակ ես տալիս...

ՄԱՐԳԱՐԻՏ. (Վշտահար եւ ամօթահար): Հայր...

ԱՆԴՐԷԱՍ. (Տակաւին վշտացած ձեւանալով) Ահ, թող ինձ, ես ի՞նչ հայր եմ, երբ հարազատ աղջիկս, ուրիշի դատարկ խօսքերով, ինձ համարում է գող, աւազակ: Թող ինձ, դնան նրա ետեից: Նա է քեզ համար թանգ, իսկ ես ո՞վ եմ, ի՞նչ եմ: Ոչինչ, ցեխի կտոր:

ՄԱՐԳԱՐԻՏ. Դու ունիս իրաւունք ինձ նախատելու, հայր, ես շտապել եմ եզրակացութիւն անելու: Ներկը ինձ, աղաչում եմ:

ԱՆԴՐԷԱՍ. Ներումն ինդրելուց ինչ օգուտ, դու պէտք է աշխատես մեղքդ քաւել, սխալդ ուղղել:

ՄԱՐԳԱՐԻՏ. Բայց ինչպէս, հայրիկ, ինչ միջոցով, սովորեցրո՞ւ, ես կըքաւեմ իմ մեղքը:

ԱՆԴՐԷԱՍ. Այ ինչպէս: Լսիր: Նա ասում է, թէ իւր ձեռքում ունի ինչ-որ գրաւոր ապացոյցներ իմ դէմ: Դու... (Շայելով շուրջը): Բայց այստեղ անյարմար է ասել: Կարծեմ, գալիս են: Գնանք իմ սենեակը, այնտեղ կըբացադրեմ ինչ-որ հարկաւոր է: Գնանք: (Գնում են աջ կողմի առաջին դռներով):

ՏԵՍԻԼ ՎՊՈՒՄ

ՍՈՒՐԷՆ ԵՒ ՍԱՂԱԹԷԼ

Ներս ևն մտնում նախասննակի դռներից:

ՍՈՒՐԷՆ. Այո, բեռի, երևակայել չես կարող, թէ ինչքան ծիծաղելի էր: Աբուլովը, քաղաքի առաջին քէֆ անողն և ամենից շատ ծախսողը, յանկարծ մնում է թատրոնի դռների մօտ քիթը քաշ: Իսկ ըստ քրոջ որդին բռնում է դեղեցկուհի Առլովայի թևից և կառք նըստեցնում:

ԱՂԱԹԷԼ. Ամօթ չը լինի հարցնելը — այդ ինչ պարծենալու բան է:

ՍՈՒՐԷՆ (Ոգևորում շարունակելով) Ամենքի ուշադրութիւնը մեզ վրայ է, բոլորը նայում են նախանձով: Աբուլովի աչքերից կրակ է թափուում: Կրակոտ Ալի-Ռաբան կառքը թռցնում է և մեզ կայծակի արագութեամբ բերում է Գրանդ-Հօթէլ: Մառանները ձեռքի ոտքի են ընկել: Սեղանը պատրաստ է: Հիւրերը սպասում են...

ՍԱՂԱԹԷԼ. Ամօթ չը լինի հարցնելը—ինչ հիւրեր:

ՍՈՒՐԷՆ. Ինձ նման դարդիմանդներ: Մեզ ծափահարում են: Կառքից ծառաները բերում են թատրոնում ստացուած փուռները — կէսն իմ նուիրածն է: Առլովան հիացած է նուէրներից: Երբէք այդպիսի բենեֆիս չի ունեցել: Յետոյ ինչ քէֆ, ինչ քէֆ: Մամպանիան ջրի պէս է հոսում: Խմում են Առլովայի կենացը, յետոյ իմը: Մէկ, երկու, երեք, յանկարծ ես սեղանի տակ եմ: Կծում եմ Առլովայի ոտը: Նա, ծիծաղելով ու ծըվփալով, նայում է ներքև: Ոտքի եմ կանգնում գեղեցկուհու կօշիկը ձեռքիս, լեցնում եմ շամպանիայով և խմում եմ նրա կենացը: Ոգևորութիւնն անասելի է: Առլովան սքանչացած է, ասում է առաջին անգամն եմ տեսնում ձեզ նման երկրպագու գեղարուեստի: Ահ, շար-

մանտ, մերովէյլ... Կին չէ, այլ դէցուհի... (Ձեռը զարկնելով Սաղաթէլի ուսին) Այժմ, քեռի, նրա սիրտն իմն է ամբողջովին: (Ձեռը զարկելով Սաղաթէլի փորին): Կը կամենաս, ծանօթացնեմ, աս, առաքինի Բաղդասար...
 ՍԱՂԱԹԷԼ. Գնա բանիդ է: Դու ինձ այն ասա, ինչ նստեց այդ քէֆը:

ՍՈՒՐԷՆ. Համեմատաբար, ոչինչ, դատարկ բան— վեց հարիւր ռուբլի:

ՍԱՂԱԹԷԼ. (Չարմացումից յետ թոշելով) Փահ, քո տունը չըքանդուի, օղճւր...
 ՍՈՒՐԷՆ. Կժեց, համ:

ՍԱՂԱԹԷԼ. Վեց հարիւր մանէթ, մի դիշերճւմ: Դէ լաւ, ամօթ չըլինի հարցնելը— Երբ ես վէքսէլներս այնա անելու:

ՍՈՒՐԷՆ. Երբոր պայմանաւորուած ժամանակը կը գայ, այնա կանեմ:

ՍԱՂԱԹԷԼ. Ես պէտք է սպասեմ քո հօր մահուան:

ՍՈՒՐԷՆ. Այո, ինչ արած:

ՍԱՂԱԹԷԼ. Բայց նա ինձանից առողջ է, կարող է ինձ նման տասին թաղել:

ՍՈՒՐԷՆ. Ես ինչ անեմ, դու ինքդ ես ինձ սովորեցրել: Տալիս ես 300, ստանում ես 2 հազարի վէքսել, որ հօրս մահից յետոյ վճարեմ: (Լռութիւն): Ախ, քեռի, դուլիս սկսեց ցաւել: Տրամադրութիւնս փչացաւ: Ամեն անգամ այդ տեսակ մեծ քէֆից յետոյ, կեանքն ինձ թըւում է յիմար, ձանձրալի բան: (Ծկատելով Ծրանուհուն, Ռօզալիային եւ Բազրատին) Ահա գալիս է ընտանեկան իդիլիան:

ՏԵՍԻԼ IX

ՆՈՅՆՔ, ԵՐԱՆՈՒՀԻ, ՌՕԶԱԼԻԱ ԵՒ ԲԱԳՐԱՏ

Դուրս են գալիս սեղանատնից:

ԵՐԱՆՈՒՀԻ. Սաղաթէլ, Չարուհուն հրամայիր, որ քեզ նախաճաշ տայ:

ՍԱՂԱԹԷԼ. (Անմիջապէս անցնում է սեղանատունն):
ԵՐԱՆՈՒՀԻ. (Սուրէնինն) Իսկ բեղ ասելն աւելորդ
է. դու, երեւի, կուշտ ես:

ՍՈՒՐԷՆ. Մախօխ լինէր, ուրախութեամբ մի աման
կուտէի:

ԵՐԱՆՈՒՀԻ. Ո՞րտեղ էիր ամբողջ դիշեր:

ՍՈՒՐԷՆ. Աստղագիտութեամբ էի զբաղուած, մա-
մա: Այժմ աստղերն երկնքից իջել են օպերետտային
թատրոն:

ԲԱԳՐԱՏ. Ամաչելո՞ւ ես մի օր, թէ՛ չէ: Ի՞նչ իրա-
ւունքով ես Դիլբարեաններից ստացել ընակարանի վար-
ձը և ծախսել:

ՍՈՒՐԷՆ. Յարգելի ինժեներ—տեխնօլոգ, կարծեմ,
ես նոյնպէս իմ հօր հարադատ որդին եմ, ինչպէս դու:

ԲԱԳՐԱՏ. Դու ապականեցիր մեր ընտանիքի ա-
նունք:

ՍՈՒՐԷՆ. Դեռ հարց է, ես, թէ՛ դու, պարոն գե-
շեֆամախեր: Ես կեղտը փչացնում եմ, իսկ դու պաշ-
տում ես: Էհ, բերանս բաց մի անէք, թէ՛ չէ - լեզուս
չար է:

ՌՕՁԱԼԻԱ. Գիտեմ, ինչ է քո չար լեզուն: Մայրիկ,
երէկ նա ինձ անուանեց աղուէսի պոչ:

ՍՈՒՐԷՆ. Իսկ այսօր կանուանեմ Մարքիզուհի Դալ-
լաքեան: Ինչ էիր այսօր ուռել ու վրուել կարեթում:
Ուղղակի ծիծաղելի էր: Այն կարտօֆելի տոպրակ Վար-
դանին էլ կարմիր չերքէզի է. հագցրել ու առաջը նըս-
տեցրել: Հերիք չէ, որ անունդ Գիւլիւմ է, փոխել ես
Ռօղալիայի, հիմայ էլ իշխանուհու շիկ ես բանեցնում:
Հէէ, դալլաք էլիզբարի թոռն: Թողէք, Աստուած սիրէք,
ամենքդ ինձ համար ծիծաղելի էք, բացի խղճալի մայ-
րիկից:

ՄԱՐԳԱՐԻՏ. (Դուրս է զալիս հօր սենեակից):

ՍՈՒՐԷՆ. Եթէ ձեր մէջ կայ մէկը, որ կարող է ինձ
նախատել, ահա, սա է: (Յոյց է տալիս Մարգարտին):

ՏԵՍԻՆ X

ՆՈՅՆՔ ԵՒ ՄԱՐԳԱՐԻՏ

ՌՕՁԱԼԻԱ. Ինչ ասել կուզի, երևելի ռեկոմենդա-
սիօն է:

ՍՈՒՐԷՆ. (Կծու) Յամենայն դէպս, արժէ Օթարեա-
նի համակրանքից զրկուելուն:

ՌՕՁԱԼԻԱ. Մայրիկ, զսպիր նրան: Նա ինձ վիրա-
ւորում է: (Սուրէնին): Սուտ է, նա ինքն է զրկուել իմ
համակրանքից:

ՍՈՒՐԷՆ. Այս, այն օրից, երբ զգացել ես, որ դու
չես նրա հաւանելին: Իսկ առաջ, երբ ուսանող էր: Գիշ
էր մնում նրա անունով մոմ վառէիր: Այս այնքան ճիշտ
է, որքան այն, որ այս բոպէիս իմ գրպաններում մեծ
օդափոխութիւն կայ: (Դադար): Ո՞րտեղ է հայրիկը:

ԲԱԳՐԱՏ. Քո բանը չէ:

ՍՈՒՐԷՆ. Հէ, թափցրէք ինձանից, բայց ես ամեն
բան գիտեմ. դայլը թակարդ է ընկել, իւր թաթերն է
կրծոտում:

ԲԱԳՐԱՏ. Կարծեմ, դու սկսում ես չափից անցնել:

ՌՕՁԱԼԻԱ. Նա հարբած է, չարժէ հեռը խօսել:

ԵՐԱՆՈՒՀԻ. Գժուել է:

ՍՈՒՐԷՆ. Էհ, ինչ էք ամեն կողմից ապշած մտիկ
անում: Ամբողջ քաղաքն է խօսում: Պէտք է բանբա-
սանքներին վերջ տալ: Երկուսից մէկը—կամ Օթարեանը
ճշմարիտն է ասում կամ զրպարտում է: Եթէ զրպար-
տում է, պէտք է պատժել: (Բազրատին) Ահ, վախե-
նում ես, դողում ես, դատարանով ես սպառնում:

ԲԱԳՐԱՏ. (Վիրաւորուած եւ վրդովուած) Վախկոտը
նա է, որ մի կնոջ պատճառով ապտակ է ստանում և
կուլ տալիս:

ՍՈՒՐԷՆ. Չայնդ կտրիր, չուն: (Յարծակում է
վրէն):

ԵՐԱՆՈՒՀԻ. (Ընկնում է որդիները մէջ:) Աման, Տէր Աստուած:

ՄԱՐԳԱՐԻՏ. Աստուած իմ, և սա ընտանիք է...

ԱՆԴՐԷԱՍ. (Յընուում է իւր սենեակի դռների մէջ առանց պիջակի, ժիլետով): Այդ ինչ աղմուկ է: (Նկատելով Սուրէնին): Աս, այդ դու ես, անառակ դաւակեանքեղ կըխեղդեմ շան պէս: (Յարձակվում է վրէն):

ՍԱՂԱԹԷԼ. (Որ դուրս է վազել Անդրէասի ծայնին սեղանատնից, անձեռոցիկը կրծքին փաթաթած): Հանդստացիր, Անդրէաս... (Բռնում է նրա թուից, յետ քաշում):

ԱՆԴՐԷԱՍ. Կորիր... Ես քեզ ասել եմ, որ աչքիս չերևաս...

ՄԱՐԳԱՐԻՏ. (Բռնելով Սուրէնի թուից) Ամօթ է, խելքի եկ: (Տանում է նրան ծախ կողմի դռներով և Իսկոյն մենակ վերադառնում է):

ԱՆԴՐԷԱՍ. Ահա իմ կեանքը, պառկեցի մի քիչ հանգստանալու, չըթողին: (Թոյլ է տալիս, որ Սաղաթէլն իրան տանի իւր սենեակը): Անիծուիք դուք...

ՌՕՋԱԼԻԱ. (Մարգարտին): Օ՛հ, այդ դու ես նրան սովորեցրել:

ՄԱՐԳԱՐԻՏ. Ամաչիր ասածիցդ, Ռօզալիա:

ԵՐԱՆՈՒՀԻ. Հիմայ էլ դուք: Այս ինչ տուն է, Տէր Աստուած:

ՌՕՋԱԼԻԱ. Սպասիր, մի օր ես քեզ հետ հաշուի կը նստեմ: (Ուզում է գնալ իւր սենեակը, քայց, Օթարեանին տեսնելով, կանգ է առնում):

ՏԵՍԻԼ XI.

ԵՐԱՆՈՒՀԻ, ՄԱՐԳԱՐԻՏ, ՕԹԱՐԵԱՆ ԵՒ ՌՕՋԱԼԻԱ.

ՕԹԱՐԵԱՆ. (Ներս է մտնում նախասենեակի դռներից ուրախ դէմքով): Բարով ձեզ, մայրիկ: (Չեռը համըրում է) Օրիորդ Ռօզալիա, բարով: (Ուզում է ձեռ տալ):

ՌՕԶԱԼԻԱ. (Արհամարհանքով, քայց վրդովուած):
Մենք ծանօթ չենք, պարոն:

ՕԹԱՐԵԱՆ. (Յնցունելով), Օրիորդ այդ ինչ է նշանակում:

ՌՕԶԱԼԻԱ. (Կծու ծիծաղով) Սիրահարներ: (Անցնում է իւր սենեակը):

ՏԵՍԻԿ XII

ՆՈՅՆՔ, ԱՌԱՆՑ ՌՕԶԱԼԻԱՅԻ:

ՕԹԱՐԵԱՆ. (Ապշած նայելով Ռօզալիաի կտուից, մօտենում է եւ մեքենաքար սեղմում Մարգարտի ձեռքը): Չեմ իմանում, ինչո՞վ եմ ես արժանացել նրա ատելութեանը:

ԵՐԱՆՈՒՀԻ. (Որ նստել է աջ կողմի ըզզկաթոռններից մէկի վրայ): Այնչ, որդի, մի նեղանար: Այստեղ մի փոքրիկ ընտանեկան խռովութիւն պատահեց: Ռօզալիան վշտացած է:

ՕԹԱՐԵԱՆ. Եթէ ես որևէ բանով մեղաւոր եմ նրա առջև, պատրաստ եմ ներումն խնդրել:

ԵՐԱՆՈՒՀԻ. Էհ, ուշադրութիւն մի դարձրու, երեխայ է, չի հասկանում: Նստի՛ր, ինչպէս է մայրդ:

ՕԹԱՐԵԱՆ. (Չսպելով իրան) Շնորհակալ եմ, մայրիկ, դուք շատ բարի էք դէպի մեզ:

ԵՐԱՆՈՒՀԻ. Ես քեզ սիրում եմ հարազատ որդու պէս: Ուրախ եմ, որ մեծացել ես և օրինաւոր մարդ դարձել: Լսել եմ, որ քո և իմ մարդու մէջ ինչ-որ վէճ է բացուել: Այդ ինձ շատ է ցաւեցնում, որդի, շատ...

ՕԹԱՐԵԱՆ. Մայրիկ, ինչ էլ որ պատահի, իմ սէրն ու յարգանքը դէպի ձեզ չի պակսիլ: Ի՞նչ քարձք էք բոլոր վէճերից:

ԵՐԱՆՈՒՀԻ. Էհ, օրհնեալ լինիս: Իմ ցանկութիւնն էլ այն է, որ բարեկամ մարդիկ հաշտ ապրին, փողի համար չը մոռանան Աստծուն:

ՉԱՐՈՒՀԻ. (Գալիս է օրհորդների սննեակից սեղանատուն անցնելու): Տիրուհի, օրհորդը ձեզ խնդրում է: (Անցնում է սեղանատուն եւ իսկոյն քեմով վերադառնում է օրհորդների սննեակը ձեռքին մի զրաֆին ջուր եւ դատ րկ ըստակ):

ԵՐԱՆՈՒՀԻ. Էհ, էլի, երեւի, հիստերիկան սկսուեց: (Շտապով գնում է օրհորդների սննեակը):

ՏԵՍԻՆ XIII

ՄԱՐԳԱՐԻՏ ԵՒ ՕԹԱՐԵԱՆ.

ՕԹԱՐԵԱՆ. (Անհավքեր մօտենալով Մարգարտին): Ի՞նչ է պատահել այստեղ, ասա:

ՄԱՐԳԱՐԻՏ. Սովորական խռովութիւն: Սուրէնն ընդհարուեց Ռօզալիայի եւ Բագրատի հետ ու միմեանց վիրաւորեցին:

ՕԹԱՐԵԱՆ. Բայց ես ինչով եմ մեղաւոր, որ քոյրդ ինձ անպատուեց:

ՄԱՐԳԱՐԻՏ. Ներողամիտ եղիւր, Ռօզալիան չը դիտէ իրան զսպել: Ես համոզուած եմ, որ յետոյ ինքը կըզղայ: (Չարուհուն, որ այդ միջոցին օրհորդների սննեակից դուրս գալով զրաֆինն ու ըստակը ձեռքին, անցնում է սեղանատուն): Ի՞նչպէս է:

ՉԱՐՈՒՀԻ. Ոչինչ, մի քիչ լաց եղաւ, հանդարտուեց: (Գնում է սեղանատուն):

ՄԱՐԳԱՐԻՏ. Թողնենք այդ: Աւելի կարևոր գործ կայ: Հայրս ուղարկել է քեզ կանչելու:

ՕԹԱՐԵԱՆ. Այո: Ո՞ւր է նա:

ՄԱՐԳԱՐԻՏ. Իւր սենեակումն է, հանգստանում է: Նստիւր: Եթէ կամենաս, իսկապէս ինձ ես հարկաւոր: Նստիւր: (Նստում են աջ կողմի ըազկաթոռների վրայ): Դու ինձ երկու կրակի մէջ ես դցել: Ես հաւատում եմ քեզ, բայց ուզում եմ հօրս էլ հաւատալ: Դուրս բեր ինձ այս անտանելի դրութիւնից: Երկուսից մէկը—կամ

դու մոլորուած ես կամ հայրս իսկապէս մի յանցաւոր է։
ՕԹԱՐԵԱՆ. Լսիր, Մարգարիտ։ Ես քանիցս քեզ ա-
 սել եմ, որ այդ դասն ինձ համար բարոյական մեծ
 նշանակութիւն ունի։ Հաւատա, փողն արժէք չունի իմ
 աչքում։

ՄԱՐԳԱՐԻՏ. Ախ, մի՛թէ ես քեզ նոր եմ ճանաչում։
 Բայց, հասկացիր, քս եւ իմ մօր փոխադարձ թշնամու-
 թիւնը կարող է ինձ կործանել, ահա ինչիցն եմ վա-
 խում։

ՕԹԱՐԵԱՆ. Միրելի, անգին Մարգարիտ, մի պղտո-
 րիր հոգիդ մօայլ մտքերով։ Ես դիտեմ, որ դու պաշ-
 տում ես հօրդ, բայց ես այնքան նրա դէմ չեմ զինուած,
 որքան եղբորդ դէմ։

ՄԱՐԳԱՐԻՏ. Բագրաաը բարեսիրտ չէ, ես դիտեմ
 այդ։

ՕԹԱՐԵԱՆ. Նա ինձ արհամարհել է ընկերական շըր-
 ջաններում։ Նա ինձ ստորացրել է տեղի և անտեղի։ Նա
 ինձ քանի քանի անգամ անուանել է ձրիակեր։ Ես ու-
 զում եմ ազատուել մուրացկանի վիրաւորական դրու-
 թիւնից։ Ուզում եմ արժանանալ քո սիրոյն։ Մի՛թէ չես
 հասկանում իմ պահանջի իսկական նպատակը։

ՄԱՐԳԱՐԻՏ. Հասկանում եմ, շատ լաւ եմ հասկա-
 նում։ Բայց ես ինչ անեմ, ես Գու դիտես, որ ես քեզ
 սիրում եմ անսահման, բայց չէ որ սիրում եմ և հօրս։
 Այսօր նա ինձ այնպիսի խօսքեր ասաց, որ ամօթից պատ-
 րաստ էի դետինը մտնել։ Ձեմ կարծում, որ նա այդ
 խօսքերն ասէր, եթէ իսկապէս իրան մեղաւոր զգար։
 Նա փաստեր է պահանջում և կամենում է, որ ես ստու-
 գեմ այդ փաստերը։

ՕԹԱՐԵԱՆ. Եւ դու ուզում ես ստուգել։ Հասկա-
 նում եմ։ Քո մէջ կուռում են երկու հաւասար զգացում-
 ներ—հաւատը դէպի հայրդ և հաւատը դէպի ինձ։

ՄԱՐԳԱՐԻՏ. Ահա հէնց այդ է ճիշտը, ինչ լաւ զգա-
 ցել ես իմ դրութիւնը։

ՕթԱրեԱն. Շատ լաւ, ես քեզ դուրս կը բերեմ այդ երկդիմի դրութիւնից:

ՄԱՐԳԱՐԻՏ. Այո այո, դուրս բեր:

ՕթԱրեԱն. Կը ներկայացնեմ քեզ իմ բոլոր ապացոյցները:

ՄԱՐԳԱՐԻՏ. Ես հէնց այդ մասին էի ուզում քեզ խնդրել:

ՕթԱրեԱն. Թող այդպէս լինի: Ինձ համար քեզանից աւելի մեծ դատաւոր չի կարող լինել: Բաւական է, որ դու, միայն դու, ասես եղբօրդ, թէ ես ձրիակեր չեմ եղել և ես պատրաստ եմ հրաժարուել իմ ժառանգութիւնից: Ես կարող էի դատարանին դիմել, բայց այդ չեմ անում միայն քո պատճառով: Ուրեմն դու եղիբ մեր դատաւորը:

ՄԱՐԳԱՐԻՏ. Շնորհակալ եմ, անչափ շնորհակալ: Եւ հաւատա, որ ես կը լինիմ արդար դատաւոր:

ՕթԱրեԱն. (Թեթեւ ցնցումով): Ահ, հէնց այդ է, որ ինձ սարսափեցնում է:

ՄԱՐԳԱՐԻՏ. Ինչո՞ւ...

ՕթԱրեԱն. Մարգարիտ, տհառ ինձ խօսք, որ երբ ճշմարտութիւնը կը պարզուի քեզ համար—չես ընկճուիլ նրա դառնութիւնից:

ՄԱՐԳԱՐԻՏ. Մի առաջարկիբ ինձ ոչ մի պայման: Դու ինքդ ես ինձ սովորեցրել ճշմարտութիւնն ամեն բանից գերադասել: Բեր այդ թղթերը, ես ուզում եմ վերջին կասկածը հեռացնել իմ սրտից: Եւ չեմ թագցնում, որ ում կողմ ևս լինի արդարութիւնը—ինձ է կործանելու, որովհետև անդունդը ուր որ բացուի,—իմ և հօրս մէջ թէ իմ և քո մէջ,—եւ եմ գլորուելու այդ անդունդը: Բեր այդ թղթերը, ես պահանջում եմ սիրող կնոջ իրաւունքով:

ՕթԱրեԱն. (Մինչ Մարգարիտն արտասանում է իւր խօսքերը, Օթարեանը տանջում է եւ կուռում իւր հետ:

Ծրը Մարգարիտը վերջացնում է, լռութիւն): Շատ լաւ,
ես կրբերեմ: (Վեր է կենում):

ՄԱՐԳԱՐԻՏ. Հէնց այսօր:

ՕԹԱՐԵԱՆ. Մի քանի բոպէից յետոյ ես այստեղ
կլլինիմ: (Գնում է նախասենեակի դռներով):

ՄԱՐԳԱՐԻՏ. (Ուղեկցում է նրան մինչեւ դռները,
ապա գալիս է ընտի կենտրոնը):

ՏԵՍԻՆ XIV

ՄԱՐԳԱՐԻՏ ԵՒ ՍՈՒՐԷՆ:

ՍՈՒՐԷՆ. (Ներս է մտնում ծախի դռներից): Զը
կարողացայ քնել: Հանգիստ չեմ: Մարդու հոգեկան
տրամադրութիւնը զարմանալի կապ ունի գրպանի դրու-
թեան հետ: Երբ այս անիծուածը դատարկ է, ինչ ու-
զում էք, ասէք, քնել չեմ կարողանում: Այո, սիրելի
Մարգարիտ, այս մի նոր հոգեբանական գիւտ է: Հե-
տեաբար, չեմ կարող, արդեօք, ինձ հաշտեցնել այն բը-
թամիտ Մօրիէօսի հետ:

ՄԱՐԳԱՐԻՏ. Ես փող չունիմ:

ՍՈՒՐԷՆ. Դու, կարծեմ, հայրիկից ամսական 300
ուրլի ես ստանում:

ՄԱՐԳԱՐԻՏ. Ես վաղուց եմ դադարել հայրիկից
փող վերցնել:

ՍՈՒՐԷՆ. Ահա թէ ինչ: Ատճւմ ես փողը, փիլիսո-
փայ ես:

ՄԱՐԳԱՐԻՏ. Ինչիս է հարկաւոր փողը, երբ տանն
ամեն բան պատրաստ կայ:

ՍՈՒՐԷՆ Այդ էլ ճիշտ է: Բայց ինձ հարկաւոր է,
ախ, շատ է հարկաւոր: Առանց փողի, եո համարեա ա-
ռանց ոտների եմ: Ես էլ եմ ատում փողը և միշտ աշ-
խատում եմ նրանից բաժանուել: Երբ գրպանս մի քա-
նի գուռներ են մտնում, մէկէլ տեսար մոծակների պէս
կծօտեցին ինձ: Էհ, ես էլ շտապում եմ նրանց բաց

Թողնել: Բայց, այնու ամենայնիւ, առանց փողի տխուր է: Ախ, Մարգարիտ, կեանքը շատ տխմար բան է: (Քիչ լրում է): Տխուր է, շատ տխուր: Ես ուզողակի ձանձրացել եմ կեանքից:

ՄԱՐԳԱՐԻՏ: (Շրջելով, թախծալի յանդիմանութեամբ: Քսան ու երեք տարեկան հասակում:

ՍՈՒՐԷՆ. Քիչ է: Մեր ժամանակում մարդիկ շատ են տեսնում, շատ են զգում և շուտ ձանձրացնում: Ազնիւ խօսք, հիմա ես երբեմն ինքս ինձանից վախենում եմ, (Հանում է գրպանից ռէվոլվերը): Եյ, տես, մի հարուած, և Ռուբիկոնն անցայ:

ՄԱՐԳԱՐԻՏ. Թող, յիմարութիւններ մի արա, կարող է տրաքել:

ՍՈՒՐԷՆ. Ոչ, այս հեշտ տրաքողներից չէ: (Յոյց է տալիս): Այ, այսպէս է տրաքում. պէտք է այս յետ բաշել, մատով սեղմել, և պատրաստ է:

ՄԱՐԳԱՐԻՏ. Տնւր ինձ, մի պահիր մօտդ, վտանգաւոր է:

ՍՈՒՐԷՆ. Ես հէնց ինքս ուզում էի դէն ձդել (Տալիս է): Վերցրու, հրաժարիմք ի սատանայէ: Լոռութիւն) Ուրեմն, չունիս:

ՄԱՐԳԱՐԻՏ. Չունիս: (Ռէվոլվերը նայում է քիչ եւ դնում սեղանի վրայ):

ՍՈՒՐԷՆ. (Լոռութիւն): Եւ ոչ գոնէ յիտուն ուուրի:

ՄԱՐԳԱՐԻՏ. (Գլխով ըացասական նշան է անում):

ՍՈՒՆԷՆ. Յաւալի է, շատ ցաւալի: Կընշանակէ՛ այսօր Աւուօլային չը պիտի տեսնեմ: Այդ անկարելի է, ամօթ է, կասի հայի տղան ծախսից փախաւ և էլի կը մօտենայ Աբուօլլին: (Յստում է ծախ կողմի ըագկաթոռներից մէկի վրայ, մտածում: Լոռութիւն: Յանկարծ ծեռը զարկում է ծակատին): Է՛վրիկա, է՛գիսօսն եմ, է՛գիսօսն: Ո՛րտեղ է Ռօզալիան:

ՄԱՐԳԱՐԻՏ. Իւր սենեակում:

ՍՈՒՐԷՆ. Նա փող կունենայ: (Դիմում է ղէպի խորքի ձախ դռները):

ՄԱՐԳԱՐԻՏ. Այդքան վիրաւորելուց յետոյ ուզում ես գիմել նրան:

ՍՈՒՐԷՆ. (հանգ է առնում): Աա, այդ դատարկ բան է: Նա գիտէ, որ իմ սիրտը բարի է, լեզուս է միայն չար: Կը հաշտուենք, դժուար չէ: Մի բիչ կըշոյեմ, կը դովեմ գեղեցիութիւնը, իսկոյն կըկակղի:

Мрачна душа моя,

Рвется она въ даль... (Երգելով, անցնում է օրհորդների սենեակը):

ՏԵՍԻԼ X V

ՄԱՐԳԱՐԻՏ ԵՒ ՕԹԱՐԵԱՆ, ՅԵՏՈՅ ԱՆԴՐԷԱՍ:

ՕԹԱՐԵԱՆ. (Ետրս է մտնում նախասենեակից, այս անգամ վերարկուով): Ահա, սիրելիս, բոլորը: (Տալիս է մի ծրար): Այստեղ է իմ պատիւը, ինքնասիրութիւնն և ամբողջ կարողութիւնը:

ՄԱՐԳԱՐԻՏ. Շնորհակալ եմ, դու մեծ հաւատ ես ընծայում ինձ:

ՕԹԱՐԵԱՆ. Այս տեսակ հաւատը քո գործնական եղբայրն անշուշտ կը համարի յիմարութիւն: Սակայն այդ ինձ համար նշանակութիւն չունի: Ես սիրում եմ բեզ, ուրեմն և՛ պէտք է հաւատամ:

ՄԱՐԳԱՐԻՏ. Որքան բարի ես դու և վեհանձն, Արտաշէս:

ՕԹԱՐԵԱՆ. Միայն քո սիրոյ համար: (Համըուրում է):

ՄԱՐԳԱՐԻՏ. Վաղը կամ միւս օրը դու բոլորը յետ կըստանաս, թող իմ խօսքը բեզ համար գրաւական լինի:

ՕԹԱՐԵԱՆ. Բաւական է այդքանը: Ցըտեսութիւն:

ՄԱՐԳԱՐԻՏ. Ցըտեսութիւն: (Ուղեկցում է նրան մինչեւ նախասենեակի դռները):

ԱՆԴՐԷԱՍ. Երեսում է իւր սենեակի դռների մէջ):

ՄԱՐԳԱՐԻՏ. (Վերադառնում է ընտի կենտրոնը եւ ուզում է զնալ իւր սենեակը)։

ԱՆԴՐԷԱՍ. (Իբր թէ Օթարեանին չի նկատել)։
Այն ո՞վ էր։

ՄԱՐԳԱՐԻՏ. Ահա, հայրիկ, ամեն ինչ այստեղ է։ Այժմ ես կիմանամ, ով է ձեզանից արդարը և ով է մեղաւորը։

ԱՆԴՐԷԱՍ. Ապրիս, զաւակս ֆենիք և տես. (Համ-
ըռնում է ծակատը)։

Գնում են իւրաքանչիւրն իւր սենեակը։

Վարագոյր։

(Կը շարունակուի)

ՇԻՐՎԱՆՉԱԴԷ